Հայկական գիտահետազոտական համցույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել տվյալ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՑԵՎ ԲԿԳ ԲԱՆԱԿՈՒՄ ԿԱՆՉՎՈՂ ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՈ-ՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՐՏԵԼՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՐՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տնայնագործների և արհեստավորների Փոխապահովա-գրության մասին ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1929 թվի հունիսի 26-ի որոշումի լրացման վերաբերյալ։

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ-ի 1929 թվի ապրիլի 7-ի որո-շումից։

4) Փոխապահովագրական և փոխօգնության գանձար-կղի վրա դրված «Տնայնագործների և արհեստավորների փոխապահովագրության վերաբերյալ» ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ-ի 1929 թվի հունիսի 26-ի որոշմամբ նախատեսված ֆունկ-ցիաների հետ միասին հանձնարարել·

բ. Գանձարկղի մասնակիցներին օգնություն ցույց տալ, որոնք կանչվում են զինվորական ծառայության կամ զինակոչային պատրաստման։

ճ) Զինվորական ծառայությունը անցկացնելու կամ մինչ զինակոչային պատրաստման համար կանչված ար-հեստավորական կոոպերատիվ ընկերությունների անդամ-ների (արտելների) օգնություն ցույց տալու համար հա-տուկ ֆոնդ է կազմված պարտադրելով արհեստավորական կոոպերատիվ ընկերություններին (արտելներին) մուծում-ներ կատարել արտ. ապահովագրական գանձարկղին։

Այդ ֆոնդերի գոյանալու, պահպանման և ծախսելու կարգի, նույնպես և ԲԳԿԲ կանչվածներին օգնություն ցույց տալու ձևը և չափի վերաբերյալ։ Համամիութենա-կան արհեստավորական կոոպերատիվ փոխ. ապ. և փոխ. օգնության խորհրդի կողմից սահմանվում է հատուկ կա-նոնադրություն ըստ համեմատական արհեստավորական կոոպերացիայի կենտրոնի համաձայնությամբ։

# ՎՈՐՈՇՈՒՄ

Համամիութենական արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխօգնության խորհրդի նախագահության կողմից միանվագ նպաստներ տալու կարգի և ԲԳԿ բանակի կանչվող արհեստավորական կոոպերացիայի արտելների կորցրած աշխատավարձի փոխհատուցման կանոնադրության հաստատման վերաբերյալ 14-ը մայիսի 1937 թիվ։

1. Հաստատել սույնին կցված միանվագ նպաստներ տալու և ԲԳԿ բանակ կանչվող արհեստավորական կոոպերացիայի արտելների անդամների վերաբերյալ կանոնադրությունը։

2. Տարածել սույն կանոնադրության ներգործումը ԽՍՀՄ-ի արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապ. և փոխօգնության գանձարկղների ամբողջ սիստեմում սկսած 1927 թվի հուլիսի 1-ից։

3. Հոդ. 1-ում ցույց տված կանոնադրությունը ներգործության մեջ անցկացնելով, հոդ. 1-ում կանոնադրությունը չեղյալ համարել մինչև այժմ գործող Համարդկոոպգանձխորհրդի 1933 թվի սեպտեմբերի 3-ին հաստատված ԲԳԿԲ կանչվող գանձարկղի անդամների կորցրած աշխատավարձի փոխադարձ հատուցման վերաբերյալ կանոնները։

Համարդկոոպգանձխորհրդի նախագահ՝ Ա. ԺԱՐՈՎ

Նախագահության քարտուղար՝ Ռ. ՑԵԳՈՐՈՎԱ

---

1. Որ. ժող. ԽՍՀՄ 1929 թ. № 42 հոդ. 369
Որ. ժող. ԽՍՀՄ 1929 թ. № 26 հոդ. 160

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Միանվագ նպաստներ տալու կարգի և ԲԳԿԲ կանչված արհեստավորական կոոպերացիայի արտելների անդամների կորցրած աշխատավարձի փոխհատուցման վերաբերյալ։

## 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Արտելի անդամներին ԲԳԿ բանակ կանչելու դեպքում, փոխ. ապ. և փոխօգնության գանձարկղը տալիս է նրանց միանվագ նպաստ, կորցրած միջին աշխատավարձը կամ նրա մի մասը։

2. Արտկոոպ արտելներից ստացած, բոլոր այդ արտելների անդամների համար (կին և տղամարդ) առանձնակի լրացուցիչ մուծումներից կազմված ԲԳԿԲ կանչվողների օգնության հատուկ ֆոնդից, նպաստների և միջին աշխատավարձի կամ նրա մի մասի հատուցումը կատարում է արտ. ապահովագրական գանձարկղը։

ԲԳԿ բանակ կանչվածների օգնության համար, այդ լրացուցիչ մուծումները կատարվում է Արտկոոպերացիայի կազմակերպությունների կողմից ընդհանուր արտկոոպերացիայի անդամների աշխատավարձի գումարի 0,7 տոկոսի չափով, ապահովագրական մուծումների վճարման հետ միաժամանակ։

3. Արտելի անդամները, վորոնք մինչև զինակոչման

կանչվելը գրառված են յոթել ցուցակներում հաշված ան-գնային արհեստավորությամբ (նայիր սույնին կցվածը) ապահովվում են միջին աշխատավարձով, նրա մի մասով կամ միանվագ նպաստով։

4. Անհատապես գանձարկղում ապահովագրված վոչ կոոպերացված տնայնագործներին, սույն կանոնադրության կարգով չեն ապահովվում։

5. Միանվագ նպաստը, միջին աշխատավարձի կամ նրա մի մասի տրվելիք պատվերների և չափի վորոշելը կախված է զինվորական ծառայության անցկացնելու կարգից։

19 տարեկանի հասած աշխատավոր տղամարդիկ անցնում են մինչզինակոչային վարժեցում։

Հետագայում նրանք զինվորական ծառայության կանչման յենթակա լինելով անցնում են ԲԳԿԲ հաստիքում կամ յերկրային մասի փոփոխիկ կազմում կամ վոչ զորամասային կարգով ծառայության։

ԲԳԿԲ հաստիքում անցկացրվածները յերկու տարվա-շարունակ (անընդհատ) ծառայությունը (իսկ ուրիշ մասերում 3—4 տարվա ընթացքում) անցնելուց հետո յերկարատև արձակուրդով ազատվում է և հետագայում յենթարկվում է միայն հավաքի։

Յերկրային մասերի փոփոխիկ կազմում յեղողները առաջին տարում անցնում են 3—5 ամսվա վարժեցում, իսկ հետո միայն հավաքի յեն կանչվում։

Վոչ զորամասայիններն իրենց զինվորական վարժեցումը անց են կացնում միայն հանքերում։ Քաղաքայինները զինվորական ծառայությունից հետո ազատվելով անցնում են պահեստում և պահեստից յենթարկվում են միայն հավաքի։

## 2. ՄԻՆՉ ԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

6. Արտելի անդամները, վորոնք մինչզինակոչային պատրաստման են կանչված, ստանում են գանձարկղից

իրենց միջին աշխատավարձը, ամբողջ հավաքի յեղած ժամանակաընթացքի համար։

## 3. ԶԻՆԱԿՈՉԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՍԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Ե

7. Արտելի անդամներին, բացառությամբ տանը աշխատողներից, զինհավաքակայանում ներկայանալու պահանջվելիս անհրաժեշտ յեղած որերի համար միջին աշխատավարձը վճարում ե գանձարկղը։

Արտելի անդամին զինվորական խսկական ծառայության կանչելու դեպքում, զինակոչային հանձնաժողովը ուղարկում ե բուժ հիմնարկներում փորձելու, գանձարկղը նրանց վճարում ե փորձման յեղած բոլոր որերի համար միջին աշխատավարձը։

8. Արտելի անդամներին զինվորական խսկական ծառայության կանչելու և ԲԳԿԲ հաստիկի մեջ մտցնելու դեպքում, նրան արտելից ազատելու ժամանակ գանձարկղը վճարում ե միանվագ նպաստ իրեն միջին աշխատավարձի 12 աշխատանքային որվա չափով։ Այս նպաստը վճարվում ե լրիվ, առանց հաշվի առնելու այն աշխատավարձը, վորը ապահովել ե հանձնաժողովին և փորձարկմանը ներկայանալու ժամանակ։

9. Արտելի անդամը, ԲԳԿԲ հաստիկում կամավոր կերպով, շարքային կազմում, շտապ ծառայության ընդունվելու դեպքում և այդ կապակցությամբ եվ արտելում իրեն աշխատանքը դադարեցրել ե, ստանում ե գանձարկղից միանվագ նպաստ իրեն միջին աշխատավարձի 12 աշխատանքային որվա չափով։

10 Զինվորական ուսումնական ձեռնարկներում ընդունված արտելի անդամների միջին աշխատավարձը պահպանվում ե այն բոլոր որերի համար, վորն անհրաժեշտ ե ներկայանալ և զինվորական ուսումնական ձեռնարկում ընդունման քննությունները տալ։

Զինվորական ուսումնական ձեռնարկում ընդունվածնե

րին, արտելի աշխատանքից ազատվելու ժամանակ, նրանք Գանձարկղից ստանում են միանվագ նպաստ, մի ամսվա աշխատավարձի չափով։

Ծնթ. Ուսումնական հիմնարկ ներկայանալու և ընդունման քննությունները տալու ժամանակվա պահպանված միջին աշխատավարձը հաշվվում է ի հաշիվ այդ միանվագ նպաստի։

11. Արտելի անդամը, որը ԲԳԿԲ կադր է նշանակված և եթե վերջին աշխատավարձի վճարման ժամանակ յերեխայի ծննդյան նպաստի իրավունք ուներ, այդ իրավունքը պահպանվում է, յեթե յերեխան ծնվել է ցույց տրված օրվանից 9 ամիս հետո։

ԲԳԿԲ հաստիքում նշանակված արտելի անդամի կամ նրա ընտանիքի անդամի մահանալու դեպքում նպաստ տրվում է, յեթե մահը տեղի յե ունեցել վերջին աշխատավարձի վճարման օրվանից 1 ամսվա ընթացքում։

## 4. ՀԱՎԱՔԻ ՑԵՆԹԱՐԿԵԼԸ

12. Յերկրային մասերի փոփոխիկ կազմում արտելի անդամները, առաջին տարում 3 — 5 ամսով զինվորական ծառայության կանչվելու դեպքում, առաջին յերեք ամսվա ծառայության համար աշխատավարձը չի պահպանվում, իսկ զինակոչի ժամանակ նպաստ են ստանում իրենց միջին աշխատավարձի 12 աշխատանքային օրվա չափով։

Գանձարկղի տված նպաստը չի հաշվվում ի հաշիվ հերթական զինակոչի դեպքում արտել անդամի ստացած գումարի։

Յերկրային մասի փոփոխիկ կազմի վարժեցման յեղող արտելի անդամի առաջին տարվա 3 ամսից ավել ծառայության յեղած ժամանակվա համար պահպանվում է նրա միջին աշխատավարձի 2—3 չափով։

13. Փոփոխիկ կազմի յերկրային մասերում շարքային կամ կրտսեր հրամանատարական և այլ կազմում

գտնվող արտելի անդամների փոփոխիկ կազմում զինվորական վարժեցման յեղած հերթական տարվա ծառայության ժամանակ ստանում են գանձարկղից իրենց աշխատավարձի 2—3 չափով։

Այն արտելի անդամները, վորոնք առաջներում յեղել են ԲԳԿԲ հաստիքային ծառայության մեջ վորպես շարքային կամ կրտսեր և պետ. հրամ. կազմում, բայց յերկարատև արձակուրդով ազատվելիս փոխադրված են յեղել յերկրային մասի փոփոխիկ կազմում, ապա նրանք հավաքի ժամանակ գանձարկղից ստանում են իրենց միջին աշխատավարձը։

14. Յերկրային մասի փոփոխիկ կազմի հրամանատարական և պետ կազմում գտնվող արտելի անդամները հավաքի յեղած ժամանակվա համար գանձարկղից ստանում են իրենց միջին աշխատավարձը։

15. Արտելի անդամները, վորոնք իրենց իսկական զինվորական ծառայությունն անց են կացնում վոչ զորամասային կարգով, գանձարկղից ստանում են բոլոր պարբերաբար հավաքների ժամանակ իրենց միջին աշխատավարձի 2—3-ին չափով։

16. Այն դեպքերում, յերբ հավաքները զինվորական պարտադիր ծառայության վերաբերյալ սահմանված օրենքով, անց է կացվում Պաշտ-Ավիաքիմի կազմակերպության գծով կամ Լուսժողկոմատի, Հողժողկոմատի և ուրիշ քաղաքացիական կոմիսարիատների կողմից, այդ հավաքներին յենթարկված արտելի անդամների զինվորական ծառայության օրերի և ժամերի համար պահպանվում է իրենց լրիվ միջին աշխատավարձը։

Այդ հավաքներն անցկացնելու համար վորպես հրահանգիչներ ընդգրկված արտելի անդամների միջին աշխատավարձը նույնպես պահպանվում է։

17. Պահեստի կամ յերկարատև արձակուրդում գտնվող շարքային հրամանատարական և պետ կազմի (նույն

թվում և կրծանը) թվին պատկանող արտելի անդամների հավաքների անցկացման ամբողջ ժամանակաընթացքում պահպանվում է նրանց միջին աշխատավարձը։

18. Հավաքի կամ յերկրային մասի փոփոխիկ կազմում յերեք—հինգ ամսով զինակոչված արտելի անդամները, յեթե յերեխայի ծննդյան նպաստ ստանալու իրավունք ունի, ապա այդ իրավունքը պահպանվում է այն դեպքում յերբ յերեխան ծնվել է հավաքի կամ ուսուցման ժամանակ։

Հավաքի կամ յերկրային մասի փոփոխիկ կազմում յերեք—հինգ ամսով ուսուցման զինակոչվածի կամ նրա ընտանիքի անդամի մահվան նպաստը տրվում է այն դեպքում, յեթե մահ տեղի յե ունեցել հավաքի կամ ուսուցման ժամանակ։

19. Մասամբ արտադրությունից կտրվելով զինվորական պատրաստման և հավաքի ընդգրկված արտելի անդամների, բացառությամբ տանը աշխատողներից, միջին աշխատավարձը պահպանվում է միայն այն ժամանակաընթացքում, վորը իրոք անհրաժեշտ է հավաքի կամ ուսուցման անցկացման համար։

Յեթե հավաքը խլում է աշխատանքային որվա կեսը կամ ավելի, ապա արտելի անդամի, բացառությամբ տանը աշխատողներից, աշխատավարձը պահպանվում է ամբողջ աշխատանքային որվա չափով։

Յեթե արտելի անդամը, բացառությամբ տանը աշխատողներից, մինչև զինվորական ուսուցումը կամ հավաքի կանչվելը աշխատում է գիշերային կամ յերեկոյան հերթին, ապա այդ դեպքում նա փոխադրվում է ցերեկային հերթում, իսկ այդպիսի փոխադրումը անհնար լինելու դեպքում, պահպանվում է ամբողջ աշխատանքային որվա աշխատավարձով։

Տանը աշխատող արտելի անդամների միջին աշխատավարձը կամ նրա մի մասը պահպանվում է, յեթե հա-

վաքի անցնելը կապված է զորանոցային կամ ճամբարային դրության մեջ լինելու հետ։

## 5. ԶԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ

20. Արտելի անդամները, բացառությամբ տանը աշխատողներից, զինպարտականության և զինծառայության գործի հետ կապված հաշվառման ներկայանալու համար պահանջվելիք ժամանակում արտելի աշխատանքից ազատվում են։

Աշխատանքի վայրում ներկայանալու դեպքում պահպանվում է աշխատանքային որվա 6 վոչ ավել և վոչ աշխատանքի վայրում ներկայանալուց մի որից վոչ ավել։

Յեթե աշխատանքից ազատվելը կապված է կորցրած կամ գողացված զինվորական հաշվառման փաստաթղթերը վերականգնեցնելու հետ, արտելի անդամի միջին աշխատավարձը չի տրվում։

## 6. ՆՊԱՍՏԻ ՎՈՐՈՇԵԼԸ ՅԵՎ ՎՃԱՐԵԼԸ. ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԱՄ ՆՐԱ ՄԱՍԵՐԸ

21 Միանվագ նպաստը, աշխատավարձը կամ նրա մասը վորոշվում է ապահովագրության դեպքի հասած առաջին ամսվա թվից, յերկու լրիվ ամսվա փաստացի միջին աշխատավարձից (վորից հանված է ապահովագրական մուծումները)։

Յեթե արտելի անդամը աշխատել է ապահովագրական դեպքի հասած առաջին ամսաթվից, յերկու ամսից պակաս, բայց մեկ լրիվ ամսից վոչ պակաս, ապա աշխատավարձը վերցվում է մեկ լրիվ ամսում։

Յեթե արտելի անդամը աշխատել է, ապահովագրական դեպքի հասած առաջին ամսաթվից մեկ ամսից պակաս, ապա հաշվառման հիմք է ծառայում նրա աշխատած ժամանակվա աշխատավարձը։

22. Նպաստի, միջին աշխատավարձի կամ նրա մասե-

րի հաշվումը կատարվում է սույն կանոնադրության կարգով։ Արտելի կողմից ծանուցագրի, զինգրքույկի կամ ինչպես տվյալ արտելի անդամին զինվորական ծառայության կանչելու, նույնպես և նրա անցկացրած ժամկետի վերաբերյալ հաստատող ուրիշ փաստաթղթերի հիման վրա։

23. Նպաստների, միջին աշխատավարձի կամ նրա մասերի վճարումը կատարվում է արտելներից հասանելիք ապահովագրական մուծումների հաշվին։

24. Հավաքների կամ ուսուցման անցկացման համար զինակոչի դեպքում, արտելի անդամի միջին աշխատավարձը, որը պահպանվում է հավաքի կամ ուսուցման ժամանակ, սկզբից արվում է 12 աշխատանքային օրերի համար։ Անցած ժամանակվա համար հաջորդ հերթական վճարումը կատարվում է աշխատող արտելի անդամների աշխատավարձի վճարման հետ միաժամանակ։

25. Միանվագ նպաստները միջին աշխատավարձի կամ նրա մասերի վճարումների և հաշվումների բոլոր աշխատանքները կատարվում են արտելի կողմից առանց արտ. ապահովագրական դրամարկղի կողմից վորեվիցե վճարումների։

26. Փոխադարձ ապահովագրական դրամարկղի կողմից չի ընդունվում այն ծախսերը, վորը կատարել է արտելն ի հաշիվ ապահովագրական մուծումների, յեթե այդ ծախսերը չի մտցրված այն ամսվա աշխատավարձերի ցուցակներում, վորի ժամանակ կատարված է ծախսերը։

27. Սույն կանոնադրությամբ չնախատեսնված նպաստների, միջին աշխատավարձի կամ նրա մասերի վճարումը անպայման չի թույլատրվում, նույնպես և սույն կանոնադրությամբ սահմանված նորմաներին հակառակ նպաստների, միջին աշխատավարձի և նրա մասերի վճարումները։

## 7. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

28. Արտելի անդամի բողոքը, կապված նույն կանոնադրության կարգով վճարվելիք միանվագ նպաստների, միջին աշխատավարձի կամ նրա մասերի վճարման հետ, լուծվում է նույն արտելի սպասարկող փոխ. ապահով գանձարկղում։

29. Փոխադարձ ապահովագրական գանձարկղի որոշումը կապված միանվագ նպաստների, միջին աշխատավարձի կամ նրա մասերի վճարման խախտումների վերաբերյալ, կարելի յէ բողոքել փոխադարձ ապահովագրական գանձարկղի սիստեմի հետևյալ վերադաս մարմիններին։

Համառդկոոպգանձխորհրդի նախագահ՝ Ա. ԺԱՐՈՎ.

Նախագահության քարտուղար՝ ՑԵԳՈՐՈՎԱ.

## ՑՈՒՑԱԿ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. Տորֆամշակում
2. Շինանյութերի հայթայթում (վոչ հանքային)
3. Շինարարական աղյուսի արտադրություն

Д II 24522
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0001575

Պետհրատի տպ., պ. 309 Ն ա., 300 օր., Գլավլիտի լիազ 6427

130

[024.]

А II / 24522